Հասկանալ ուրացության և վերականգնման անհրաժեշտությունը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Ուսումնասիրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները և Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հայտարարությունը, ապա պատասխանեք ստորև տրված հարցերին:

1. 1 Նեփի 13.24–28. Նեփին տեսիլքում տեսնում է, թե ինչ է տեղի ունենալու Աստվածաշնչի կարևոր ճշմարտությունների հետ:
2. Ամովս 8.11–12. Ամովսը մարգարեանում է գալիք հոգևոր սովի մասին:
3. Գործք Առաքելոց 20.29–30. Պողոսը զգուշացնում է, որ Փրկչի Եկեղեցու անդամները շեղվելու են ավետարանից:
4. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.

«Մեր ապրող Աստվածը սիրող Աստված է: Նա ցանկանում է, որ Իր զավակները ճանաչեն Իրեն և Հիսուս Քրիստոսին, ում Նա է ուղարկել: Եվ Նա ցանկանում է, որ Իր զավակները ձեռք բերեն անմահություն և հավերժական կյանք:

«Այս փառահեղ նպատակի համար մեր միսիոներները ուսուցանում են Վերականգնման մասին: Նրանք գիտեն, որ մոտ 2000 տարի առաջ Տերը հիմնեց Իր Եկեղեցին: Նրա Խաչելությունից և Նրա Առաքյալների մահից հետո մարդիկ փոխեցին Եկեղեցին և նրա վարդապետությունը: Այնուհետև, հոգևոր խավարի սերունդներից հետո, և ինչպես կանխագուշակվել էր նախորդ մարգարեների կողմից, Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը վերականգնեցին Եկեղեցին, նրա վարդապետությունը և քահանայության իշխանությունը: Այդ Վերականգնման շնորհիվ գիտելիքը և փրկության ու վեհացման կարևոր արարողությունները կրկին հասանելի են բոլոր մարդկանց: Ի վերջո, այդ վեհացումը թույլ է տալիս մեզանից յուրաքանչյուրին մեր ընտանիքների հետ հավերժ ապրել Աստծո և Հիսուս Քրիստոսի՛ ներկայության մեջ» (Ռասսել Մ. Նելսոն, «Բռնիր ալիքը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2013, 46):

- Ի՞նչ սովորեցիք Մեծ Ուրացության մասին այս սուրբգրային հատվածներից և նախագահ Նելսոնի հայտարարությունից:

- Այյս ուսմունքներից ի՞նչ սովորեցիք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

- Ձեր սովորածի վրա հիմնվելով՝ ասեք, թե ինչո՞ւ էր Վերականգնումը անհրաժեշտ:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 2—Study Guide*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.